Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության

« 01 » «դեկտեմբեր» 2017թ.

թիվ 229/01 որոշմամբ

Վարչության նախագահ

------------------------ Ա. Խաչատրյան

Ուժի մեջ է մտնում 15.12.2017թ.-ից

*Հրապարակման ամսաթիվը «01» «դեկտեմբեր» 2017թ.*
*Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,*
*մանրամասների համար՝*
*Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Զանգերի կենտրոն*

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
## ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ

ԵՐԵՎԱՆ 2017

1. Անվանումը - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
   Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1
   Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am
   Կայք - www.aeb.am
   Հեռախոս - (37410)8686, (37410)510-910 (9104)
   Ֆաքս - (37410)53-89-04

2. - Ավանդային գրքույկի տրամադրում` ըստ ավանդատուի ցանկության - անվճար,
   - ավանդային գրքույկը կորցնելու դեպքում - 1000 դրամ:

<table>
<tr><th colspan="7">Տոկոսագումարների վճարումը ամսական</th></tr>
<tr><th rowspan="3">Ներգրավման ժամկետ<br>/ օր /</th><th colspan="6">Տարեկան տոկոսադրույք</th></tr>
<tr><th rowspan="2">ՀՀ դրամ</th><th colspan="2">ԱՄՆ դոլար</th><th colspan="2">Եվրո</th><th rowspan="2">ՌԴ ռուբլի</th></tr>
<tr><th>մինչև 50 000 ԱՄՆ դոլար</th><th>50 000 ԱՄՆ դոլար և ավելի</th><th>մինչև 50 000Եվրո</th><th>50 000 Եվրո և ավելի</th></tr>
<tr><td>ա/ 30-ից - 90 օր</td><td>5.30%</td><td>0.65%</td><td rowspan="6">պայմանագրային</td><td>-</td><td rowspan="6">պայմանագրային</td><td>4.25%</td></tr>
<tr><td>բ/ 91-ից -182 օր</td><td>6.75%</td><td>1.50%</td><td>0.20%</td><td>5.00%</td></tr>
<tr><td>գ/ 183ից - 274 օր</td><td>7.50%</td><td>2.20%</td><td>0.60%</td><td>6.00%</td></tr>
<tr><td>դ/ 275ից - 366 օր</td><td>8.50%</td><td>3.20%</td><td>1.50%</td><td>6.00%</td></tr>
<tr><td>ե/ 367ից - 545 օր</td><td>9.50%</td><td>4.10%</td><td>2.50%</td><td>7.00%</td></tr>
<tr><td>զ/ 546ից - 728օր</td><td>10.0%</td><td>4.10%</td><td>2.50%</td><td>7.25%</td></tr>
</table>

- տարին ընդունելով 365 օր, նահանջ տարվա համար 366 օր

<table>
<tr><th rowspan="3">Ներգրավման ժամկետ<br>/օր/</th><th colspan="6">Տարեկան տոկոսային եկամտաբերություն տոկոսագումարների ամսական վճարման դեպքում*</th></tr>
<tr><th rowspan="2">ՀՀ դրամ</th><th colspan="2">ԱՄՆ դոլար</th><th colspan="2">Եվրո</th><th rowspan="2">ՌԴ ռուբլի</th></tr>
<tr><th>մինչև 50 000 ԱՄՆ դոլար</th><th>50 000 ԱՄՆ դոլար և ավելի</th><th>մինչև 50 000Եվրո</th><th>50 000 Եվրո և ավելի</th></tr>
<tr><td>ա/ 30-ից 90 օր</td><td>5.43%</td><td>0.65%</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>4.33%</td></tr>
<tr><td>բ/ 91-ից 182 օր</td><td>6.96%</td><td>1.51%</td><td>-</td><td>0.20%</td><td>-</td><td>5.12%</td></tr>
<tr><td>գ/183ից - 274 օր</td><td>7.76%</td><td>2.22%</td><td>-</td><td>0.60%</td><td>-</td><td>6.17%</td></tr>
<tr><td>դ/ 275ից - 366 օր</td><td>8.84%</td><td>3.25%</td><td>-</td><td>1.51%</td><td>-</td><td>6.17%</td></tr>
<tr><td>ե/ 367-ից 545 օր</td><td>9.92%</td><td>4.18%</td><td>-</td><td>2.53%</td><td>-</td><td>7.23%</td></tr>
<tr><td>զ/546-ից 728 օր</td><td>10.47%</td><td>4.18%</td><td>-</td><td>2.53%</td><td>-</td><td>7.50%</td></tr>
</table>

- տարին ընդունելով 365 օր

| **Տոկոսագումարների վճարումը ժամկետի վերջում** | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ներգրավման ժամկետ / օր / | Տարեկան տոկոսադրույք | | | | | |
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | | Եվրո | | ՌԴ ռուբլի |
| | | մինչև 50 000 ԱՄՆ դոլար | 50 000 ԱՄՆ դոլար և ավելի | մինչև 50 000Եվրո | 50 000 Եվրո և ավելի | |
| ա/ 20-ից - 29օր | 3.00% | - | պայմանագրային | - | պայմանագրային | - |
| բ/ 30-ից - 90 օր | 5.50% | 0.75% | | - | | 4.25% |
| գ/ 91-ից -182 օր | 7.00% | 1.75% | | 0.25% | | 5.25% |
| դ/ 183ից - 274 օր | 8.00% | 2.50% | | 0.75% | | 6.25% |
| ե/ 275ից - 366 օր | 9.00% | 3.50% | | 1.75% | | 6.25% |
| զ/367ից - 545 օր | 10.0% | 4.50% | | 2.75% | | 7.25% |
| է/546ից - 728օր | 10.5% | 4.50% | | 2.75% | | 7.50% |

- տարին ընդունելով 365 օր, նահանջ տարվա համար 366 օր

| Ներգրավման ժամկետ /օր/ | **Տարեկան տոկոսային եկամտաբերություն տոկոսագումարների ժամկետի վերջում վճարման դեպքում**** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | | Եվրո | | ՌԴ ռուբլի |
| | | մինչև 50 000 ԱՄՆ դոլար | 50 000 ԱՄՆ դոլար և ավելի | մինչև 50 000Եվրո | 50 000 Եվրո և ավելի | |
| ա/ 20-ից - 29 օր | 3.04% | - | - | - | - | - |
| բ/ 30-ից - 90 օր | 5.62% | 0.75% | - | - | - | 4.32% |
| գ/ 91-ից -182 օր | 7.12% | 1.76% | - | 0.25% | - | 5.32% |
| դ/183ից - 274 օր | 8.08% | 2.51% | - | 0.75% | - | 6.25% |
| ե/ 275ից - 366 օր | 9.00% | 3.50% | - | 1.75% | - | 6.25% |
| զ/ 367ից - 545 օր | 9.77% | 4.45% | - | 2.73% | - | 7.13% |
| է/ 546ից - 728օր | 10.0% | 4.40% | - | 2.71% | - | 7.24% |

- տարին ընդունելով 365 օր

*ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով ավանդների տոկոսագումարների ամսական վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:

3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

**ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, ՌԴ ռուբլով ավանդների տոկոսագումարների վճարումը ժամկետի վերջում ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

1) A - ավանդի սկզբնական գումարն է:
2) n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:
3) N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4) Kn - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5) Dn – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական` n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_1 = 0$:
6) Ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվում ներգրավման ժամկետի յուրաքանչյուր միջակայքի առավելագույն արժեքը:

***«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.aeb.am »:***

3. Հաշվեգրված տոկոսները չեն կապիտալացվում և վճարվում են ավանդատուին ամիսը մեկ անգամ կամ ավանդային պայմանագրի ժամկետի վերջում:

4. Տոկոսները հաշվարկվում են ներդրված ավանդի գումարի մնացորդի վրա:

5. Ավանդային պայմանագրով սահմանված ժամկետներից շուտ ավանդը կամ մասը վերադարձնելու ավանդատուի պահանջի դեպքում ավանդի կամ այդ մասի տոկոսները հաշվարկվում են բանկում ցպահանջ ավանդների համար սահմանված չափով, իսկ մինչև այդ պահը փաստացի հաշվարկված և վճարված տոկոսագումարները պահվում են վերադարձվող ավանդի գումարից և տոկոսները հաշվարկվում են մնացորդային գումարի վրա, եթե այլ բան չի նախատեսվում ավանդային պայմանագրով: Եթե ավանդը կամ դրա մի մասը պահանջվել են պայմանագրի երկարաձգված ժամկետում, ապա նախորդ ժամկետի(ների) համար վճարվում են ավանդի պայմանագրով սահմանված տոկոսները, իսկ տվյալ ժամկետի համար ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում են տոկոսագումարներ բանկում ցպահանջ ավանդների համար տվյալ պահին սահմանված չափով:

6. Ավանդի պայմանագրի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված այլ հանգամանքները երևան գալուց հետո, եթե ավանդատուն չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա պայմանագիրը երկարաձգված է համարվում բանկում ցպահանջ ավանդների համար գործող պայմաններով, եթե այլ բան չի նախատեսվում ավանդի պայմանագրով:

6.1 Ավանդը 274 օր և ավելի ժամկետում վերադարձնելու պայմանով ներդրվելու կամ այդ ժամկետից ոչ պակաս ժամկետով երկարաձգվելու դեպքերում՝ Ավանդատուն կարող է ավելացնել Ավանդին լրացուցիչ գումարներ միայն Ավանդի վերադարձման (երկարաձգված) ժամկետին նախորդող մինչև 180-րդ օրը և ներդրման (երկարաձգման) պահին Ավանդի գումարի մնացորդի չափից ոչ ավելի գումարով, որի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսների չափով և պայմաններով: Ավանդը 274 օրից պակաս ժամկետում վերադարձնելու պայմանով ներդրվելու դեպքում՝ Ավանդին գումարներ չեն կարող ավելացվել, իսկ նման պայմանով երկարաձգվելու դեպքում՝ գումարներ կարող են ավելացվել միայն երկարաձգման օրը և ոչ ավել Ավանդի մնացորդ գումարի չափից: Ավանդն

ավելացնելուց հետո Ավանդի մասի վաղաժամկետ վերադարձման պահանջի դեպքում՝ առաջնահերթ վերադարձվում են Ավանդին ավելացված վերջին գումարները, իսկ դրանց համար ավանդի պայմանագրով սահմանված ցպահանջ տոկոսները հաշվարկվում են դրանք Ավանդին ավելացվելու հաջորդ օրվանից մինչև վաղաժամկետ վերադարձնելու նախորդ օրը:

7. Բանկն իրավունք ունի փոփոխել ցպահանջ ավանդների դիմաց վճարվող տոկոսների չափը:

8. Բանկն առնվազն եռամսօրյա պարբերականությամբ ներդրողին (ավանդատուին) տրամադրում է իր ավանդային հաշվի վերաբերյալ քաղվածք ավանդային պայմանագրով սահմանված եղանակով, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել, բացի այդ ավանդատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրել հաշվի քաղվածք բանկի հայտարարած Սակագներով:

ՀՀ դրամ

Տոկոսագումարը ամսական վճարման դեպքում

| 60 օր ժամկետով տարեկան 5.3% տոկոսադրույք | | 120 օր ժամկետով տարեկան 6.75% տոկոսադրույք | | 210 օր ժամկետով տարեկան 7.5% տոկոսադրույք | | 300 օր ժամկետով տարեկան 8.5% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 9.5% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 10% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ |
| 500,000 | 3,855 | 500,000 | 9,903 | 500,000 | 19,325 | 500,000 | 31,334 | 500,000 | 43,218 | 500,000 | 73,849 |

Տոկոսագումարը ժամկետի վերջում վճարման դեպքում

| 25 օր ժամկետով տարեկան 3.0% տոկոսադրույք | | 60 օր ժամկետով տարեկան 5.5% տոկոսադրույք | | 120 օր ժամկետով տարեկան 7% տոկոսադրույք | | 210 օր ժամկետով տարեկան 8% տոկոսադրույք | | 300 օր ժամկետով տարեկան 9% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 10% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 10.5% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ |
| 500,000 | 887.67 | 500,000 | 4,001 | 500,000 | 1,270 | 500,000 | 20,614 | 500,000 | 33,177 | 500,000 | 45,493 | 500.000 | 77,542 |

ԱՄՆ դոլար (մինչև 50 000 ԱՄՆ դոլար)

Տոկոսագումարը ամսական վճարման դեպքում

| 60 օր ժամկետով տարեկան 0.65% տոկոսադրույք | | 120 օր ժամկետով տարեկան 1.5% տոկոսադրույք | | 210 օր ժամկետով տարեկան 2.20% տոկոսադրույք | | 300 օր ժամկետով տարեկան 3.20% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 4.10% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 4.10% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ |
| 2,000 | 1.89 | 2,000 | 8.80 | 2,000 | 22.68 | 2,000 | 47.18 | 2,000 | 74.61 | 2,000 | 121.11 |

Տոկոսագումարը ժամկետի վերջում վճարման դեպքում

| 60 օր ժամկետով տարեկան 0.75% տոկոսադրույք | | 120 օր ժամկետով տարեկան 1.75% տոկոսադրույք | | 210 օր ժամկետով տարեկան 2.50% տոկոսադրույք | | 300 օր ժամկետով տարեկան 3.50% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 4.50% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 4.50% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ |
| 2,000 | 2.18 | 2,000 | 10.27 | 2,000 | 25.77 | 2,000 | 51.61 | 2,000 | 81.89 | 2,000 | 132.93 |

Եվրո

Տոկոսագումարը ամսական վճարման դեպքում

| 120 օր ժամկետով տարեկան 0.2% տոկոսադրույք | | 210 օր ժամկետով տարեկան 0.6% տոկոսադրույք | | 300 օր ժամկետով տարեկան 1.5% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 2.5% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 2.5% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ | ներդրված գումար | տոկոսային եկամուտ |
| 1,000 | 0.59 | 1,000 | 3.09 | 1,000 | 11.06 | 1,000 | 22.95 | 1,000 | 36.92 |

Տոկոսագումարը ժամկետի վերջում վճարման դեպքում

| 120 օր ժամկետով տարեկան 0.25% տոկոսադրույք | | 210 օր ժամկետով տարեկան 0.75% տոկոսադրույք | | 300 օր ժամկետով տարեկան 1.75% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 2.75% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 2.75% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | խտացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ |
| 1,000 | 0.73 | 1,000 | 3.87 | 1,000 | 12.90 | 1,000 | 25.02 | 1,000 | 40.62 |

ՌԴ ռուբլի

Տոկոսագումարը ամսական վճարման դեպքում

| 60 օր ժամկետով տարեկան 4.25% տոկոսադրույք | | 120 օր ժամկետով տարեկան 5.0% տոկոսադրույք | | 240 օր ժամկետով տարեկան 6.0% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 7.00% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 7.25% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | խտացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | խտացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ |
| 100,000 | 618.29 | 100,000 | 1,467.12 | 100,000 | 3,535.89 | 100,000 | 6,369 | 100,000 | 10.708 |

Տոկոսագումարը ժամկետի վերջում վճարման դեպքում

| 60 օր ժամկետով տարեկան 4.25% տոկոսադրույք | | 120 օր ժամկետով տարեկան 5.25% տոկոսադրույք | | 240 օր ժամկետով տարեկան 6.25% տոկոսադրույք | | 370 օր ժամկետով տարեկան 7.25% տոկոսադրույք | | 600 օր ժամկետով տարեկան 7.50% տոկոսադրույք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | խտացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | խտացվելիք տոկոսներ | ներդրվող ավանդ | ստացվելիք տոկոսներ |
| 100,000 | 618.29 | 100,000 | 1,540.48 | 100,000 | 3,683.22 | 100,000 | 6,596.5 | 100,000 | 11,077.3 |

* - արտարժույթով արտահայտված տոկոսները վճարվում են ՀՀ դրամով, տոկոսների վճարման օրվան նախորդող օրը ՀՀ արժութային շուկայում ձևավորված արտարժույթի միջին փոխարժեքով

- Հաշվարկներում տարին ընդունվել է 365 օր, ընդ որում տոկոսագումարները հաշվարկված են հաշվի առած եկամտահարկը:

9. Այլ անձանց կողմից ավանդատուի ավանդը օգտագործելու կամ տնօրինելու լիազորությունները ընդունվում են, եթե լիազորությունը տրվել է նոտարով վավերացված լիազորագրով կամ բանկում անձամբ ավանդատուի կողմից՝ բանկի աշխատակցի ներկայությամբ և հաստատումով ձևակերպված և ստորագրված՝ գրավոր լիազորագրով:

10. Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում ավանդատուն գրավոր դիմում է բանկին և 10 աշխատանքային օրվա ընթացքում ավանդատուին տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում ավանդատուն իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:

11. Ավանդի ներդրման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա, իսկ վճարվող տոկոսները ենթակա են հարկման «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով:

12. Ավանդը ներդրվում է նվազագույնը 20 և առավելագույնը 728 օր ժամկետով:

13. Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.
   - միայն ՀՀ դրամով բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է,
   - միայն արտարժութային բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է,
   - ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը մեծ է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդը` մինչև տասը միլիոն հայկական դրամով,
   - ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը` հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով: